ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2019թ. թիվ 709-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՉԿԱԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2019թ. հուլիսի 9-ի «2020 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» թիվ 35-Ա որոշման՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. 2020 թվականի մարտի 15-ին նշանակել Լոռու մարզի Չկալով համայնքի ղեկավարի հերթական ընտրություններ և այդ համայնքի նորընտիր ղեկավարի կողմից լիազորությունների ստանձնման ժամկետը սահմանել 2020թ. ապրիլի 17-ը:

2. Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝ սույն որոշման մասին ծանուցել Չկալով համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 23
ք.Վանաձոր